ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության
(2025թվական)

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում և աջակցում է մարզային ենթակայությամբ **44 հանրակրթական ուսումնական հաստատությունների և 3 մարզային մշակութային ՊՈԱԿ-ների** գործունեությունը /Եղեգնաձորի երաժշտական դպրոց, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Եղեգնաձորի մշակույթի կենտրոն/:

Աջակցում է նախարարության ենթակայությամբ 3 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների */ Եղեգնաձորի վարժարան, Վայքի ավագ դպրոց, Ջերմուկի կրթահամալիր/* և համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական, մշակութային և մարզական հաստատությունների ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու գործընթացին:

ՀՀ Վայոց ձորի մարզում առկա են 19 նախադպրոցական ուսումնական հաստատություններ:

Եղեգնաձոր համայնք – 8 ՆՈՒՀ / նախադպրոցական ուսումնական հաստատություն/

1. <<Վերնաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
2. <<Գլաձորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
3. <<Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մսուր մանկապարտեզ>>ՀՈԱԿ
4. <<Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
5. <<Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
6. <<Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
7. <<Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
8. <<Գետափի «Արևիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Արենի համայնք - 6 ՆՈՒՀ

1. <<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ
<<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մասնաճյուղ Խաչիկ բնակավայրում
2 . <<Արփիի մանկապատեզ>> ՀՈԱԿ
3. <<Աղավնաձորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
4. <<Ռինդի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
5. <<Լիսա Գրիգորյանի անվան>> ՀՈԱԿ մանկապարտեզ
6. << Արենի համայնքի Ելփին բնակավայրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Վայք համայնք - 3 ՆՈՒՀ

1. <<Ջառիթափի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
2. <<Վայքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
3. <<Վայքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Ջերմուկ համայնք - 2 ՆՈՒՀ

1. <<Ջատիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ
<<Ջատիկ>> մանկապարտեզ» ՀՈԱԿ- ի մասնաճյուղ Կեչուտում
2.<<Գնդեվազի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

ՀՀ Վայոց ձորի մարզում համայնքային ենթակայությամբ գործում են .

3 մանկապատանեկան մարզադպրոց
1.Վայք համայնքի մանկապատանեկան մարզադպրոց,
2.Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց,
3.Մալիշկայի մարզադպրոց

1 մարզամշակութային կենտրոն Ջերմուկ համայնքում:

4 արվեստի դպրոց՝ համայնքային ենթակայությամբ:
1. Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց
2. Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց
3. Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց
4. Վայք քաղաքում՝ Խ. Ներսիսյանի անվան արվեստի դպրոց

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են.

2 թանգարան՝
1. «Գլաձորի պատմամշակութային արգելոց-թանգարան»՝ ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ:
2. Եղեգնաձորի երկրագիտական թանգարան՝ մարզային ենթակայությամբ:

1 երաժշտական դպրոց Եղեգնաձոր քաղաքում՝ մարզային ենթակայությամբ:

2 պատկերասրահ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում:

2 ՄՍԿ (մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն)՝ Վայք և Եղեգնաձոր քաղաքներում:

1 գեղարվեստի դպրոց՝ Եղեգնաձոր քաղաքում:

1 տարածաշրջանային պետական քոլեջ Եղեգնաձոր քաղաքում

1 կրթահամալիր Ջերմուկ քաղաքում

/2025 թ. սեպտեմբեր ամսին աշակերտների թիվը՝ 382/,

1 ավագ դպրոց Վայք քաղաքում

/ 2025 թ. սեպտեմբեր ամսին աշակերտների թիվը՝ 200/ ,

1 վարժարան Եղեգնաձոր քաղաքում **,**

/2025 թ. սեպտեմբեր ամսին աշակերտների թիվը՝ 343/,

13 հիմնական և 31 միջնակարգ դպրոցներ

/2025 թ. սեպտեմբեր ամսին աշակերտների թիվը՝ 6020)

Ընդամենը մարզում ՝ 6945 սովորող 2025 թվականի սեպտեմբեր ամսվա դրությամբ

ՀՀ կառավարության կողմից բամաթիվ ծրագրեր են իրականացվում կրթության ոլորտում: Վերանորոգվում են ուսումնական հաստատությունների շենքեր, կառուցվում են նորերը:
/ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 30-ի N 2093-ն որոշում/

Կառուցվել է 3 դպրոց

1. ***Եղեգնաձորի թիվ 1 հիմնական***
/ աշակերտների թիվը՝ 595, դպրոցի նախագծային հզորությունը՝ 432/
2. ***Գոմքի միջնակարգ***
/ աշակերտների թիվը՝ 31 դպրոցի նախագծային հզորությունը՝ 100/
3. ***Եղեգիսի միջնակարգ***
/ աշակերտների թիվը՝ 39 , դպրոցի նախագծային հզորությունը՝ 100/

Կառուցվում են 4 կրթահամալիրներ.

1. ***Արտաբույնքի կրթահամալիր***
/ աշակերտների թիվը՝ 113, Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 144, Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 80/ - աշխատանքները դեռ չեն սկսվել

2. ***Արփիի կրթահամալիր***
/ աշակերտների թիվը՝ 147, Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 144 , Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը 40 /

3. ***Մարտիրոսի կրթահամալիր***
/աշակերտների թիվը՝ 59 , Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 144, Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 80 /

4. ***Քարագլխի կրթահամալիր***
/ աշակերտների թիվը՝ 77, Կրթահամալիրի նախագծային հզորությունը՝ 200, Կրթահամալիրի մանկապարտեզի նախագծային հզորությունը՝ 80/

Կառուցվում են դպրոցներ.

1. ***Զիվայի միջնակարգ*** */ աշակերտների թիվը՝ 57 , դպրոցի նախագծային հզորությունը՝ 150, նախակրթարան՝ 20 տեղ /*
2. ***Գետափի միջնակարգ դպրոց*** */ աշակերտների թիվը՝ 266, դպրոցի նախագծային հզորությունը՝ 288/*
3. ***Արենիի միջնակարգ դպրոց*** */ աշակերտների թիվը՝ 310, նախագծային հզորությունը՝ 432/*
5. **Վայքի հիմնական դպրոց** *աշխատանքները դեռ չեն սկսվել*

Վերանորոգվում և հիմնանորոգվում են դպրոցներ.

1. **Շատինի միջնակարգ դպրոց**
2. **Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց**
3. **Մալիշկայի Մ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց**
4. **Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց**
5. **Ռինդի միջնակարգ դպրոց**
6. **Գլաձորի միջնակարգ դպրոց**
7. **Զառիթափի միջնակարգ դպրոց**

Ուսումնական տարվա ընթացքում այցելություններ են կատարվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգման, դպրոցավարությանն անհրաժեշտ փաստաթղթերին և գործառույթներին ծանոթացման, դասալսումների իրականացման, անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցության տրամադրման նպատակով:
Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

2024-2025 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադա

1. Դպրոցական փուլի մասնակիցների թիվը՝ **2994**
2. Մարզային փուլի մասնակիցների թիվը՝ **196**
3. Հանրապետական փուլի մասնակիցների թիվը՝ **18**
4. Հանրապետական փուլում մրցանակային տեղեր գրաված և գովասանագրի արժանացած աշակերտներ՝ **3**

•Բաբայան Անի - Եղեգնաձորի վարժարան, 12-րդ դասարան, ֆրանսերեն, ***3-րդ կարգի դիպլոմ***
•Մարգարյան Տիգրան - Գնդեվազի միջնակարգ դպրոց, 9-դ դասարան, աշխարհագրություն, ***3-րդ կարգի դիպլոմ***
•Գևորգյան Նանե - Հերհերի միջնակարգ դպրոց, 9-րդ դասարան, հայ գրականություն, ***գովասանագիր:***

Մայիսի 2-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանն հյուրընկալել էր Հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող սպարտակիադայի բազկամարտ և հրաձգություն մարզաձևերի եզրափակիչ փուլում 1-ին տեղը գրաված աշակերտուհիներ Գոհար Մելքոնյանին / Եղեգնաձորի Հովհ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց/ և Մարինե Մկրտչյանին /Արենիի միջնակարգ դպրոց/ , դպրոցականների առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլում աշխարհագրություն առարկայից 3-րդ տեղը գրաված Գնդեվազի միջնակարգ դպրոցի աշակերտ Տիգրան Մարգարյանին, ֆրանսերեն առարկայից 3-րդ տեղը գրաված Եղեգնաձորի վարժարանի 12-րդ դասարանի աշակերտուհի Անի Բաբայանին, ինչպես նաև հայ գրականություն և ՆԶՊ առարկաներից գովասանագրերի արժանացած Նանե Գևորգյանին /Հերհերի միջնակարգ դպրոց/ և Սաթենիկ Հայրապետյանին /Չիվայի միջնակարգ դպրոց/:

Հանդիպմանը ներկա էին նաև մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի ոլորտի պատասխանատուները, իսկ աշակերտներին ուղեկցել են դպրոցների տնօրենները:

Մարզպետը շնորհակալություն է հայտնել աշակերտներին ձեռքբերումների համար, զրուցել նրանց հետ մի շարք հարցերի շուրջ՝ մասնագիտական կողմնորոշում, հաջողությունների հասնելու գրավականներ, դժվարությունների հաղթահարում, նպատակասլացություն, աշակերտների հետաքրքրությունների շրջանակ, զբաղվածություն և այլն:

Դպրոցների տնօրենների հետ քննարկել են կրթության ոլորտին առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես օլիմպիադաներում աշակերտների ներգրավվածության մեծացում, ֆիզիկական դաստիարակության դրվածքը դպրոցներում և առկա նյութատեխնիկական հնարավորությունների ազդեցությունը դրա վրա, աշակերտների բազմակողմանի զարգացվածությանը նպաստող նախադրյալների ապահովում, մանկավարժի մասնագիտության նկատմամբ դպրոցականների շրջանում հետաքրքրվածության խթանում և այլն:

Հանդիպման ավարտին Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանը շնորհակալագրեր է հանձնել մարզական հաջողություններ գրանցած դպրոցականներին՝ Վայոց ձորի մարզը լավագույնս ներկայացնելու, իսկ առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլում բարձր արդյունքներ ապահոված աշակերտներին՝ կայուն գիտելիքներ դրսևորելու համար:

2025 թվականի նոյեմբեր ամսին մեկնարկել են 2025-2026 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադաները՝ համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի <<2025-2026 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության հանրակրթական առարկայական օլիմպիադաների (Մաթեմատիկա, Ֆիզիկա, Աստղագիտություն, Կենսաբանություն, Ինֆորմատիկա/ <<Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն>>/ Քիմիա, Աշխարհագրություն, Մայրենի/ ընթերցանություն/,Հայոց լեզու, Հայ գրականություն, Պատմություն, Անգլերեն, Գերմաներեն, Ռուսաց լեզու, Ֆրանսերեն, Նախնական զինվորական պատրաստություն/ <<Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն>>/) կազմակերպման, անցկացման, բողոքարկման ընթացակարգերը և ժամանակացույցը հաստատելու մասին>> N2479-Ա/2 հրամանով հաստատված ընթացակարգի և ժամանակացույցի:

Վայոց ձորի մարզից դպրոցական փուլին գրանցված աշակերտների

թվային տվյալները / 2025-2026 ուսումնական տարի/

Հ/Հ	Մաթեմ	Ֆիզիկա	Աստղ	Կենսաբ	Ինֆորմ	Քիմիա	Աշխարհ	Հայեզու	Հգրակ	Մայրենի	Պատմ	ՆԶՊ	Ռուսեզու	Անգլ	Ֆրանս	Գերման	Ընդ.
Ընդ.	945	136	7	158	66	105	145	376	264	400	202	227	262	217	26	23	3559

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի 2-րդ փուլը կանցկացվի համաձայն ժամանակացույցի, որը կմեկնարկի հունվարի 15-ին :

Կրթական գործընթացի որակը էականորեն կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը: Այդ նպատակով իրականացվել են վերապատրաստումներ տարբեր ուղություններով: Մասնավորապես՝ <<Առողջ ապրելակերպ>> պարտադիր խմբակի դասավանդողների վերապատրաստման դաընթացներ, ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի կողմից <<Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում>> ծրագրի շրջանակներում հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար նախատեսված գենդերազգայուն և գենդեր–արձագանքող կրթության վերաբերյալ վերապատրաստումներ: ՀՀ Վայոց ձորի մարզի թվով 20 հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ ԿԳՄՍ նախարարության <<Կրթական ծրագրերի կենտրոն>> ԾԻԳ-ի կողմից տրամադրվել են անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներ: ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների համար ուսումնական գործընթացում լաբորատոր սարքավորումների կիրառման ուղղությամբ կազմակերպվել և իրականացվել են վերապատրաստումներ՝ յուրաքանչյուր ուսումնական հաստատության 5 ոլորտի (քիմիա, կենսաբանություն, ֆիզիկա, աշխարհագրություն և թվային գրագիտություն և համակարգչային գիտություն) ուսուցիչների համար:

ՆԶՊ-ի ուսուցմանն արդյունավետ նախապատրաստվելու նպատակով՝ անցկացվել են ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական դպրոցների զինղեկների եռօրյա ուսումնամեթոդական հավաքներ:

2025 թվականի սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին դպրոցների «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսուցիչների /զինղեկ/ համար ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի կողմից իրականացվել են աղետների ռիսկի կառավարման և ճգնաժամային

իրավիճակներին արձագանքելու վերապատրաստման դասընթացներ հեռավար ձևաչափով, որից հետո յուրաքանչյուր զինղեկ նույն վերապատրաստումն անցկացրել է դպրոցի անձնակազմի շրջանում:

Հանրակրթական ուսումնական հաստատությունների 8-11-րդ դասարաններում, «Մասնագիտական կողմնորոշում» խմբակի ներդրմանն աջակցելու նպատակով, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի «Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոն» մասնաճյուղի կողմից կազմակերպվել է մանկավարժների վերապատրաստում:

Վերոնշյալ վերապատրաստումները համակարգվել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից:

2025 թվականի դեկտեմբեր ամսվա տվյալների համաձայն՝ ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա է 76 ուսուցչի թափուր տեղ:

Մանագիտական կողմնորոշման նպատակով՝ «Քո արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակներում, 2025թ. նոյեմբեր ամսին մարզի դպրոցների աշակերտների մասնակցությամբ հանդիպումներ են անցկացվել անվանի մշակութային գործիչների, արվեստագետների հետ:

1. ՀՀ Վայոց ձորի մարզի 8 դպրոցներից 100 աշակերտներ Վայքի հիմնական դպրոցում հանդիպում ունեցան Մարինե Օթարյանի հետ:
2. ՀՀ Վայոց ձորի մարզի 7 դպրոցներից 100 աշակերտներ Եղեգիսի միջնակարգ դպրոցում հանդիպում ունեցան Գոռ Ղուկասյանի հետ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը:

Մասնագիտական կողմորոշման նպատակով՝ ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում սովորող ավելի քան 300 աշակերտների համար 2025 թվականի հոկտեմբերի 20-ից 24-ը իրականացվել է ճանաչողական այց ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա: Մասնագիտական կողմորոշման նպատակով՝ ՀՀ ՊՆ Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի ներկայացուցիչների հետ հանդիպումներ են կազմակերպվել ՀՀ Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների հետ:

Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ, որոնք մեծապես նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

Ստորև ներկայացվում են մի շարք միջոցառումներ, որոնց մասնակցել, կամ կազմակերպման և համակարգման աշխատանքներում ներգրավված է եղել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը:

Մայրենի լեզվի միջազգային օր. դպրոցականները ներկայացրել են ազգային փոքրամասնությունների մշակույթին վերաբերող նախագծեր

Փետրվարի 21-ը Մայրենի լեզվի միջազգային օրն է: Օրվան ընդառաջ՝ մշակութային կրթության ուսումնական տարվա շրջանակում ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությամբ Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի է ունեցել ՀՀ-ում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակույթին ու լեզվին

նվիրված էքսպո, որի ընթացքում ցուցադրվել են դպրոցականների նախագծային աշխատանքները:
Նախապես հայտարարված մրցույթի արդյունքում ՀՀ յուրաքանչյուր մարզից և մայրաքաղաքից հաղթող է ճանաչվել 2-ական դպրոց: Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնում կազմակերպված եզրափակիչ միջոցառմանը վերջինները ներկայացրել են իրենց նախագծերն առանձին տաղավարով:
ՀՀ Վայոց ձորի մարզից էքսպոյին մասնակցել են Գնդեվազի միջնակարգ և Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոցները:
Ներկայացնելով կատարված աշխատանքը՝ աշակերտներն ընդգծել են, որ ուսումնասիրության ընթացքում հանդիպել են ազգային փոքրամասնություն ներկայացնող համայնքների հետ, ծանոթացել նրանց ավանդույթներին, խոհանոցին, պատմությանը և նախագծերն իրականացրել նաև նրանց օգնությամբ: Երեխաներին հատկապես տպավորել են ազգային փոքրամասնությունների ծեսերը, կրոնական առանձնահատկությունները: Մասնակից աշակերտները շնորհանդեսից հետո աբոնեմենտային ծրագրի շրջանակում դիտել են «Պատվի համար» ներկայացումը:

«Դպրոցական բաժանորդային համակարգի ներդրում» ծրագիր

Դպրոցական բաժանորդային համակարգով 2025 թվականի մայիսի 20-ին և 22-ին << Արտաշատի Ա. Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն>>ՊՈԱԿ-ի անձնակազմը հյուրախաղերով հանդես եկավ Վայոց ձորի մարզում՝ ներկայացնելով << Բարեկենդանը>> ներկայացումը: Աբոնեմենտային ծրագրի շրջանակում այն դիտել են շուրջ 2000 սովորող Եղեգնաձոր, Ազատեկ, Արենի, Զառիթափ, Խնձորուտ, Գոմք, Գնդեվազ, Վերնաշեն, Հորբատեղ, Հերմոն, Գետափ, Մալիշկա, Ռինդ, Գլաձոր, Ագարակաձոր, Արփի, Արին, Ելփին, Թառաթումբ, Արտաբույնք բնակավայրերից:

<<Հայրենիքը սկսվում է մեզնից>>

Ջերմուկի կրթահամալիրում տեղի ունեցավ Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի կողմից կազմակերպված <<Հայրենիքը սկսվում է մեզնից>> խորագրով միջոցառումը՝ նվիրված Հանրապետության տոնին:
Օրվա խորհրդին համահունչ գույներով, գեղարվեստական գեղեցիկ ելույթներով արվեստի դպրոցի սաները հիացմունքի պահեր պարգևեցին հանդիսատեսին՝ մեկ անգամ ևս փաստելով, որ, այո՛, հայրենիքը սկսում է յուրաքանչյուրից...

Ու հնչեց վերջին զանգը. . .

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում 2025 թվականի մայիսի 23-ին հնչեց վերջին զանգը: Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են դպրոցներ, ներկա գտնվել հանդիսավոր միջոցառումներին, ներկայացրել Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանի շնորհավորական ուղերձը, բարեմաղթանքի խոսքեր ուղղել շրջանավարտներին:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 08.05.2025 թ. N1067-Ա/2 հրամանով հաստատված «Մշակութային Վերջին զանգ» միջոցառումների հանձնաժողովը սահմանված գնահատման սանդղակով ամփոփել է մրցույթի արդյունքները, որի արդյունքում ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 2 հիմնական և Աղավնաձորի միջնակարգ դպրոցները ճանաչվել են «Մշակութային վերջին զանգ» մրցույթի հաղթողներ:

Հուլիսի 3-ին «Կինոյի տանը» տեղի ունեցավ «Մշակութային վերջին զանգ» միջոցառումների մրցույթի հաղթողներին նվիրված միջոցառումը: Միջոցառման ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաղթող դպրոցները խրախուսվեցին շնորհակալագրերով, որից հետո իրականացվել է ֆիլմի դիտում:

Սեպտեմբերի 1-ը՝ Գիտելիքի և դպրության տոն

Սեպտեմբերի 1-ին մեկնարկեց նոր ուսումնական տարին. խորհրդանշական զանգի ազդարարմամբ և տոնական միջոցառումներով ուսումնական հաստատությունները կրկին իրենց հյուրընկալ դռները բացեցին նախադպրոցական ու դպրոցական տարիքի երեխաների և ուսանողների առջև:

Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանը հյուրընկալել է ՀՀ -ում Ֆրանսիայի դեսպանության ներկայացուցչին

Սեպտեմբերի 1-ին Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանը մարզպետի աշխատակազմում հյուրընկալել է ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության Մշակույթի և համագործակցության հարցերով խորհրդականի տեղակալ և կրթական համագործակցության հարցերով կցորդ Դոմինիկ Վեսին և քաղաքացիական կամավորների:

Ֆրանսիացի հյուրերի այցի նպատակն էր քննարկել Վայոց ձորի մարզում ֆրանսերենի ուսուցման, ֆրանկոֆոն մշակույթի արժեքների տարածման հարցերը, ինչպես նաև ներկայացնել Ֆրանսիական քաղաքացիական կամավորին, ով դեսպանության հովանու ներքո Վայոց ձորի մարզում կծավալի կամավորական աշխատանքներ ֆրանկոֆոնիայի զարգացման և տարածման նպատակով:

Մարզպետ Կոլյա Միքաելյանը նշել է, որ Հայաստանի և Ֆրանսիայի միջև համագործակցությունը և բարեկամական հարաբերությունները խարսխված են ամուր հիմքերի, ընդհանուր արժեքների և փոխադարձ հետաքրքրությունների վրա և ունեն զարգացման լայն հեռանկարներ: Այն դրսևորվում է նաև տարածաշրջանային մակարդակում տարբեր ուղղություններով, ուստի կարևորվում են նաև ապակենտրոնացված համագործակցության ակտիվացման ու ներուժի օգտագործման հնարավորությունները:

Քննարկման առանցքային թեման կրթության ոլորտում իրականացվելիք ծրագրերն էին, ուստի ներկայացվեց մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման ընդհանուր պատկերը: 5 դպրոցում որպես օտար լեզու շուրջ 737 աշակերտի կողմից ուսումնասիրվում է ֆրանսերենը՝ Եղեգնաձորի թիվ 2 հիմնական, Զառիթափի, Աղնջաձորի, Բարձրունու և Գետափի միջնակարգ դպրոցները:

Դասանյութը մատուցվում է ժամանակակից մեթոդիկայով և նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ: Ֆրանսերենի ուսուցիչները վերապատրաստում են անցել Ֆրանսիայի Հանրապետությունում՝ ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանության աջակցությամբ, մասնակցել են հեռավար վերապատրաստումների, ինչպես նաև ՀՀ-ում իրականացվող ծրագրերին և վերապատրաստումներին:

Դոմինիկ Վեսը շնորհակալություն է հայտնել ընդունելության և այն ջանքերի համար, որ ներդրվում են մարզում ֆրանսերենի դասավանդման, տարածման, խնդիրների լուծման ուղղությամբ, ապա ներկայացրել է կամավորի աշխատանքի ընդհանուր ուղղությունները՝ կրթություն, մշակույթ, երիտասարդության ոլորտ:

Քննարկվել են համագործակցությանն առնչվող այլ ընթացակարգային հարցեր ևս:

Առողջ ապրելակերպի հանրային իրազեկման արշավը Վայոց ձորում

Սեպտեմբերի 9-ին Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Ռինդ բնակավայրում տեղի ունեցավ Առողջապահության նախարարության կողմից ՔՈԱՖ-ի և Պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ իրականացվող «Հանրային առողջության պահպանման» ծրագրի «Առողջ ապրելակերպի և ծխելու դեմ պայքարի միջոցառումների» շրջանակում հանրային իրազեկման արշավ:

Հայաստանի Հանրապետության 10 մարզերում և մայրաքաղաքում իրականացվող արշավների նպատակն է հանրության շրջանում բարձրացնել իրազեկվածությունն առողջ ապրելակերպի վերաբերյալ, խրախուսել առողջ սննդի պատրաստումը, ֆիզիկական ակտիվությունը և առողջ վարքագծի ձևավորումը:

Վայոցձորյան միջոցառմանը մասնակցում էին Արենի համայնքի բոլոր բնակավայրերի դպրոցականները:

Իրազեկման արշավը մեկնարկել է քայլերթով:

Միջոցառման մասնակիցներին ողջունել է Վայոց ձորի մարզպետի տեղակալ Արսեն Խաչատրյանը՝ կարևորելով առողջ ապրելակերպի գաղափարների տարածմանն ու սովորույթների արմատավորմանը միտված և արդեն գեղեցիկ ավանդույթ դարձած այս միջոցառման կազմակերպումը:

Միջոցառման կարևորագույն մասն էին նաև տեղեկատվական տաղավարները, որտեղ ներկայացվել են առողջ սննդի բաղադրատոմսեր, դրանց պատրաստման ընթացքը և արդյունքները: Մյուս տաղավարներում մասնակիցները հնարավորություն են ստացել տեղեկություններ ստանալ մասնագետներից՝ արյան զարկերակային ճնշման չափում, գլյուկոզի որոշում, մարմնի զանգվածի ինդեքսի որոշում և այլն:

Միջոցառման շրջանակներում անցկացվել են միջդպրոցական էստաֆետային խաղեր, առողջ սննդի վերաբերյալ վիկտորինա, մասնակից դպրոցները ներկայացրել են տեղեկատվական պաստառներ: Միջոցառումն ուղեկցվել է խմբային պարերով, գեղարվեստական կատարումներով:

Նոյեմբերի 11-ին Առողջապահության ազգային ինստիտուտում անցկացվեց արշավների փակման արարողությունը, որի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզն արժանացավ շնորհակալագրերի 3 անվանակարգերում:

1. <<Լավագույն ստոմատոլոգիական տաղավար>>
2. <<Լավագույն ազգային երգ ու պար>>
3. <<Լավագույն գործընկեր մարզ >>

<<100 ղողանջ կրթության լույսով>> խորագրով միջոցառում

Նոյեմբերի 2-ին <<100 ղողանջ կրթության լույսով>> խորագրով միջոցառման շրջանակներում նշվել է ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի միջնակարգ դպրոցի հիմնադրման 100-ամյակը:

Դպրոցի ամենատարեց շրջանավարտի կողմից բացվել է դպրոցի հիմնադրման 100-ամյակին նվիրված խաչքարը: Այնուհետև հնչել են ելույթներ և շնորհավորական խոսքեր հյուրերի, նախկին և ներկա ուսուցիչների, շրջանավարտների կողմից. . .

Ներկայացվել է նաև <<Անցյալի ուղիներով>> խորագրով խոսուն ցուցադրություն՝ լուսանկարներ, դասամատյաններ, փաստաթղթեր, հիշողությունների և իրադարձությունների մի ամբողջ պատմություն, որ այսօր էլ շարունակվում է և ունենալու է իր շարունակությունը. . .

Տոնական միջոցառումն ուղեկցվել է Հերհերին բնորոշ ավանդական ուտեստների հյուրասիրությամբ և համերգային մասով:

<<Ճակատագրով ուսուցիչ>> խորագրով միջոցառում Աղավնաձորի միջնակարգ դպրոցում

Նոյեմբերի 7-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում մեծ հանդիսավորությամբ նշվեց դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Սոնիկ Եղյանի ծննդյան 90-ամյակը:
Միջոցառմանը ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Վահագն Արսենյանը, մարզպետի տեղակալ Վասիլ Ասլանյանը, դպրոցի՝ տարբեր տարիների ուսուցիչներ, շրջանավարտներ, հյուրեր:
Հնչել են գնահատանքի և երախտագիտության խոսքեր, արժևորել են ուսուցչուհու՝ սերունդների կրթության և դաստիարակության գործում ներդրած ջանքերը:
Վաստակաշատ ուսուցչուհի Սոնիկ Եղյանը երկարամյա բարեխիղճ և նվիրված աշխատանքի համար Վայոց ձորի մարզպետ Վահագն Արսենյանի կողմից արժանացել է շնորհակալագրի:

Արենիի միջնակարգ դպրոցը նշեց 60-ամյա հոբելյանը

Նոյեմբերի 22-ին << 60 տարվա լուսավոր ուղի>> խորագրի ներքո Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոցում մեծ շուքով և հանդիսավորությամբ նշվեց կրթօջախի 60-ամյա հոբելյանը: Տոնական միջոցառմանը մասնակցում էին հյուրեր, ուսուցիչներ, տարբեր տարիների շրջանավարտներ. . .
Օրվա խորհրդին համահունչ՝ կրթօջախում ներկայացվել էր տպավորիչ ցուցադրություն՝ լուսանկարներ, խորհրդանշական պարագաներ և իրեր, որոնք ամփոփում էին վեց տասնամյակների մի ամբողջ տարեգրություն, հիշողությունների, իրադարձությունների, հաղթանակների և ձեռքբերումների մի ամբողջ շղթա, որը դեռ բազում համալրումներ է ունենալու. . .
Հնչել են ելույթներ և շնորհավորական խոսքեր հյուրերի, նախկին և ներկա ուսուցիչների, շրջանավարտների կողմից, ներկայացվել են գեղեցիկ հիշողություններ, գեղարվեստական կատարումներ:
Միջոցառման շրջանակներում անցկացվել է նաև պանելային քննարկում . դպրոցի տարբեր տարիների շրջանավարտները խոսել են կրթության դերի և նշանակության մասին, կարևորել անհատի՝ հաջողությունների կերտման ճանապարհին դպրոցական տարիներին ստացած գիտելիքները և դասերը:

Աշունը հույսի, վստահության և խաղաղության կամուրջ» խորագրով միջոցառում Գնդեվազի միջնակարգ դպրոցում

Վայոց ձորի մարզի Գնդեվազի միջնակարգ դպրոցը կազմակերպել էր «Աշունը հույսի, վստահության և խաղաղության կամուրջ» խորագրով միջոցառում: Այդ օրը դպրոցում աշնանային ներկապնակի հարուստ գույներին և թեմատիկ ձևավորումներին կազմակերպիչները գեղարվեստական ուրույն լուծումներով հմտորեն համադրել էին անուշաբույր ավանդական ուտեստները, աշնան առատ բերք ու բարիքը, ժողովրդական կենցաղը և սովորությունները պատկերող դրվագները, երգն ու պարը: Եվ այս ամենն <<Անվտանգ և ապահով կրթական միջավայրի տարվա>> շրջանակներում այն դիտարկմամբ, որ բերք ու բարիք, արժեք ու արդյունք ստեղծվում, արարվում են ապահով, խաղաղ և անվտանգ միջավայրում:

Հնչած ելույթներում կարևորվել է աշակերտների գեղագիտական դաստիարակությանը, ժողովրդական հարուստ ավանդույթների արժևորմանն ուղղված նախաձեռնությունների իրականացումը:

ՍՊՈՐՏ

Ըստ ժամանակացույցի Վայոց ձորի մարզում անցկացվել են «ՀՀ վարչապետի գավաթ» մարզական միջոցառումներ, ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի առաջնություններ, հուշամրցաշարեր, դպրոցականների սպորտլանդիաներ, սպարտակիադաներ, ռազմամարզական խաղեր:

1.Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո անցկացվող Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղեր

Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո անցկացվող «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերն անցկացվում են աշակերտների շրջանում բասկետբոլի մասսայականացման, առողջ ապրելակերպի քարոզման և տաղանդավոր ու հեռանկարային մարզիկներին ասպարեզ բերելու նպատակով:

Փետրվարի 12-ին ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիսի նորակառույց միջնակարգ դպրոցում մեկնարկեց «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի առաջին՝ համայնքային (նախընտրական) փուլը:

Տարիքային առաջին խմբում /5-6-րդ դասարաններ/ իրենց ուժերը չափեցին հետևյալ ուսումնական հաստատությունները՝ Քարագլխի միջնակարգ դպրոց-Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց, Շատինի միջնակարգ դպրոց- Չիվայի միջնակարգ դպրոց, Աղնջաձորի միջնակարգ դպրոց-Արենիի միջնակարգ դպրոց, Եղեգնաձորի վարժարան-Ագարակաձորի միջնակարգ դպրոց, Արփիի միջնակարգ դպրոց-Գլաձորի միջնակարգ դպրոց:

Մարտի 14-ին ավարտվեցին «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի տարածաշրջանային փուլերը: Շուրջ մեկ ամիս տևած խաղերին մարզի հանրակրթական 27 դպրոցներից երկու տարիքային խմբերում մասնակցեցին 719 աշակերտներ:

Մարզական համառ և գեղեցիկ պայքարում 5-6-րդ դասարանների մրցույթում հաղթող ճանաչվեցին Եղեգնաձորի Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի և Ազատեկ-Հերհեր միջնակարգ դպրոցների միասնական թիմերը:

Տարիքային երկրորդ խմբում /7-9-րդ դասարաններ/ ուժեղագույններն Արենիի միջնակարգ և Վայքի հիմնական դպրոցի թիմերն էին:

Տարածաշրջանային փուլերում 1-3-րդ տեղեր գրաված բոլոր դպրոցները ԿԳՄՍ նախարարության կողմից պարգևատրվել են շնորհակալագրերով:

Ապրիլի 4-ին ավարտվեց ՀՀ Վայոց ձորի մարզի «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի մարզային փուլը:

Առաջին տարիքային խմբի / 5-6-րդ դասարանների աշակերտներ / եզրափակիչ մրցույթում հանդիպեցին Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական և Ազատեկի ու Հերհերի միջնակարգ դպրոցների աշակերտները:

Երկրորդ տարիքային խմբի / 7-9-րդ դասարանների աշակերտներ / եզրափակիչ մրցույթում հանդիպեցին Վայքի հիմնական և Արենիի միջնակարգ դպրոցների թիմերը:

Համառ և գեղեցիկ պայքարում հաղթողներ ճանաչվեցին Եղեգնաձորի թիվ 2 և Վայքի հիմնական դպրոցների թիմերը:

Եզրափակիչ խաղերի բոլոր չորս թիմերն էլ արժանացան ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված մրցանակների՝ հավաստագրերի, գավաթների, և իրավունք ստացան մասնակցելու մրցույթի միջմարզային փուլին:

Վայք քաղաքի մարզադպրոցում մայիսի 21-ին և 22-ին կազմակերպվեցին ՀՀ Վարչապետի հովանու ներքո իրականացվող <<Բասկետբոլի լիգա>> մարզական խաղերի 5-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող 6-րդ ենթախմբի միջմարզային փուլի խաղերը:

6-րդ ենթախմբում ընդգրկված էին Նոր ուղու միջնակարգ, Երևանի թիվ 44 հիմնական, Կապանի թիվ 13 հիմնական, Քաջարանի թիվ 2 միջնակարգ և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը:

Համառ պայքարում հաղթողներ ճանաչվեցին Կապանի թիվ 13 հիմնական և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը: Նրանք իրավունք ստացան մասնակցելու <<Բասկետբոլի լիգա>> մարզական խաղերի 1/16-րդ եզրափակիչ փուլին:

Վայք քաղաքի մարզադպրոցում մայիսի 28-ին և 29-ին կազմակերպվեցին ՀՀ Վարչապետի հովանու ներքո իրականացվող <<Բասկետբոլի լիգա>> մարզական խաղերի 7-9-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող 6-րդ ենթախմբի միջմարզային փուլի խաղերը:

Համառ պայքարում Վայքի հիմնական դպրոցի թիմը իրավունք ստացավ մասնակցելու <<Բասկետբոլի լիգա>> մարզական խաղերի 1/16-րդ եզրափակիչ փուլին:

Հանրապետական փուլում մարզի հավաքականները մրցանակային տեղեր չեն զբաղեցրել:

2.<<Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ>> սիրողական սեղանի թենիսի Վայոց ձորի մարզի տարածաշրջանային փուլերը

Եղեգնաձորի տարածաշրջանում տարիքային երկու խմբերում հանդես են եկել 11 դպրոցների 88 մասնակիցներ: Առաջին տարիքային խմբում /5-9-րդ դասարաններ/ հաղթող ճանաչվեցին Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցը / 1-ին տեղ/, Չիվայի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/, Եղեգնաձորի Հովի. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցը /3-րդ տեղ/:

Տարիքային երկրորդ խմբում /10-12-րդ դասարաններ/ լավագույն արդյունք ցուցաբերեց Եղեգնաձորի վարժարանը, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը գրավեցին համապատասխանաբար Արենիի և Չիվայի միջնակարգ դպրոցները:

Վայքի տարածաշրջանում տարիքային երկու խմբերում հանդես են եկել 8 դպրոցների 64 մասնակիցներ: Առաջին տարիքային խմբում /5-9-րդ դասարաններ/ հաղթող ճանաչվեցին Բարձրունու միջնակարգ դպրոցը / 1-ին տեղ/, Արտավանի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/, Մարտիրոսի միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:

Տարիքային երկրորդ խմբում /10-12-րդ դասարաններ/ լավագույն արդյունք ցուցաբերեց կրկին Բարձրունու միջնակարգ դպրոցը, իսկ իսկ 2-րդ և 3-րդ տեղերը գրավեցին համապատասխանաբար Արտավանի և Գնդեվազի միջնակարգ դպրոցները: Տարածաշրջանային փուլում հաղթող ճանաչված դպրոցների թիմերը ապրիլի 11-ին մասնակցեցին մարզային փուլին:

ՀՀ Վայոց ձորի մարզի «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մարզային փուլ

Մրցաշարն անց էր կացվում երկու տարիքային խմբերով՝ 5-9-րդ և 10-12- րդ դասարանների միջև: Յուրաքանչյուր տարիքային խմբում մարզային փուլի ուղեգիր էին ձեռք բերել մարզի վեց դպրոցների թիմերը:

5-9-րդ դասարանների մրցույթում հանդես եկան Բարձրունու, Արտավանի, Մարտիրոսի, Չիվայի միջնակարգ և Եղեգնաձորի թիվ 1 և թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը:

10-12-րդ դասարանների մրցույթում հանդես եկան Եղեգնաձորի վարժարանի, Գնդեվազի, Արենիի, Արտավանի, Չիվայի և Բարձրունու միջնակարգ դպրոցների հավաքական թիմերը:

5-9- րդ դասարանների տարիքային խմբում հաղթող ճանաչվեց Բարձրունու միջնակարգ դպրոցի թիմը, 10-12-րդ դասարանների մրցույթում հաղթող ճանաչվեց Եղեգնաձորի վարժարանը:

Հաղթողներն իրավունք ձեռք բերեցին մասնակցելու Չարենցավանում կայանալիք եզրափակիչ փուլին:

Եզրափակիչ փուլում վերոնշյալ դպրոցները պարգևատրվեցին ԿԳՄՍ նախարարության շնորհակալագրերով և սեղանի թենիսի խաղադաշտերով:

3.<<ՀՀ վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլ

Մայիսի 7-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության , մշակույթի, սպորտի վարչության համակարգմամբ անցկացվեց <<ՀՀ վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային փուլը:

Միջոցառմանը մասնակցում էին մարզի 25 դպրոցների թիմերը / 5 տղա և 2 աղջիկ/, ընդհանուր թվով՝ 175 աշակերտ:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանը, ով կարևորեց սպորտի առանցքային և անբաժանելի դերը մարդու կյանքում՝ նշելով, որ այն կերտում է բնավորություն, ամրացնում կամքի ուժը, իսկ թիմային մարզաձևերը զարգացնում են նաև համախմբվածություն և միասնականություն:

Այնուհետև տրվեց մրցույթի մեկնարկը. թիմերը պետք է հաղթահարեին Ագարակաձորից դեպի Գռավ ձգվող ճանապարհի 5 կմ հատվածը:

<<ՀՀ վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքի Վայոց ձորի մարզային փուլում հաղթող ճանաչվեց Արենիի միջնակարգ դպրոցի թիմը, որն իրավունք ստացավ հունիսի 28-29-ին Դիլիջանում մասնակցելու եզրափակիչ փուլին: 2-րդ և 3-րդ տեղերը գրավեցին համապատասխանաբար Աղավնաձորի և Ագարակաձորի միջնակարգ դպրոցների թիմերը:

2025 թվականին ևս Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոցի թիմը <<ՀՀ վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարի եզրափակիչ փուլում ցուցաբերեց բարձր պատրաստվածություն և գրանցեց հաղթական արդյունք՝ գրավելով 2-րդ պատվավոր հորիզոնականը:

Մրցաշարին մասնակցել է 11 թիմ՝ յուրաքանչյուրի կազմում 7 աշակերտ (5 տղա, 2 աղջիկ)՝ հաղթահարով 5000 մետր մրցատարածությունը:

1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրված դպրոցների թիմերը և մասնակիցները պարգևատրվել են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական պարգևներով:

Մասնավորապես՝ երկրորդ տեղ զբաղեցրած Արենիի միջնակարգ դպրոցը ստացել է 2 մլն 500 հազար դրամ, ֆիզկուլտուրայի ուսուցիչը ստացել է 500 հազար դրամ, իսկ թիմում ընդգրկված 7 աշակերտից յուրաքանչյուրը՝ 100 հազարական դրամ:

4.«Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի համայնքային փուլ

/ Վայքի տարածաշրջան/

Մայիսի 15-ին Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի վարչության համակարգմամբ անցկացվեց «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի համայնքային փուլը /Վայքի տարածաշրջան/:
Մալիշկա բնակավայրին հարակից մայրուղու՝ սահմանված 25 կմ տարածությունը հաղթահարելու համար պայքարի էին դուրս եկել Վայքի տարածաշրջանի դպրոցների 100 աշակերտներ հետևյալ բաշխվածությամբ՝ 7-9-րդ դասարանների աշակերտներ 18 դպրոցներից 2-ական մասնակիցներով, 10-12-րդ դասարանների աշակերտներ 16 դպրոցներից 4-ական մասնակիցներով:
Համընդհանուր ոգևորության և համախմբվածության մթնոլորտում անցավ մարզական միջոցառումը: Ձեռնարկվել էին անվտանգության անհրաժեշտ միջոցառումները:
1-ին տարիքային խմբում համառ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեցին Խնձորուտի միջնակարգ դպրոցը /1-ին տեղ/, Ազատեկի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/ , Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:
2-րդ տարիքային խմբում մրցանակային տեղերը գրավեցին Խնձորուտի միջնակարգ դպրոցը /1-ին տեղ/, Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/, Մարտիրոսի միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:
Մրցանակային տեղեր զբաղեցրած բոլոր դպրոցների թիմերը մայիսի 20-ին մասնակցեցին «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի մարզային փուլին:

/Եղեգնաձորի տարածաշրջան/

Մայիսի 16-ին Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի վարչության համակարգմամբ անցկացվեց «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի համայնքային փուլը /Եղեգնաձորի տարածաշրջան/:
Մալիշկա համայնքին հարակից մայրուղու՝ սահմանված 25 կմ տարածությունը հաղթահարելու համար մրցում էին Եղեգնաձորի տարածաշրջանի դպրոցների 132 աշակերտներ հետևյալ բաշխվածությամբ՝ 7-9-րդ դասարանների աշակերտներ 24 դպրոցներից՝ 2-ական մասնակիցներով, 10-12-րդ դասարանների աշակերտներ 21 դպրոցներից՝ 4-ական մասնակիցներով:
Համընդհանուր ոգևորության և համախմբվածության մթնոլորտում անցավ մարզական միջոցառումը: Ձեռնարկվել էին անվտանգության անհրաժեշտ միջոցառումները:
1-ին տարիքային խմբում համառ պայքարի արդյունքում հաղթող ճանաչվեցին Արփիի միջնակարգ դպրոցը /1-ին տեղ/, Ագարակաձորի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/ , Աղավնաձորի միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:
2-րդ տարիքային խմբում մրցանակային տեղերը գրավեցին Աղավնաձորի միջնակարգ դպրոցը /1-ին տեղ/, Արենիի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/, Եղեգիսի միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:

«Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի մարզային փուլը

Մայիսի 20-ին Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի վարչության համակարգմամբ անցկացվեց «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի մարզային փուլը:
Մալիշկա համայնքին հարակից մայրուղու՝ սահմանված 30 կմ տարածությունը հաղթահարելու համար պայքարեցին համայնքային փուլում մրցանակային տեղեր գրաված դպրոցների թիմերը, ընդհանուր հաշվով՝ 7-9-րդ դասարանների 12 աշակերտներ և 10-12-րդ դասարանների 24 աշակերտներ:
Մեկնարկից առաջ թիմերին ողջունեց և հաջողություններ ցանկացավ ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանը:
Մարզական ոգևորության և համախմբվածության մթնոլորտում անցավ մարզական միջոցառումը: Ձեռնարկվել էին անվտանգության անհրաժեշտ միջոցառումները:
1-ին տարիքային խմբում հաղթող ճանաչվեցին Աղավնաձորի միջնակարգ դպրոցը /1-ին տեղ/, Ագարակաձորի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/, Արփիի միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:
2-րդ տարիքային խմբում մրցանակային տեղերը գրավեցին Արենիի միջնակարգ դպրոցը /1-ին տեղ/, Աղավնաձորի միջնակարգ դպրոցը /2-րդ տեղ/, Խնձորուտի միջնակարգ դպրոցը /3-րդ տեղ/:
Լավագույն արդյունքներ ցուցաբերած թիմերը մասնակցեցին «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի եզրափակիչ փուլին, որը կայացավ սեպտեմբերի 12-13-ին Շողակաթում:

Դպրոցականների շրջանում հեծանվային սպորտի և առողջ ապրելակերպի մասսայականացման, ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության նպատակով սեպտեմբերի 13-ին Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի թերակղզուց դեպի Շողակաթ բնակավայր՝ 40 կմ ճանապարհահատվածում, անցկացվել է «ՀՀ վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի **եզրափակիչ փուլը:**

Մրցաշարն անցկացվել է 2 տարիքային խմբերով. մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 7-9-րդ և 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական թիմերը. 1-ին տարիքային խումբ՝ 7-9-րդ դասարանների աշակերտներ (թիմի կազմում՝ 1 տղա, 1 աղջիկ և 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ), 2-րդ տարիքային խումբ՝ 10-12-րդ դասարանների աշակերտներ (թիմի կազմում՝ 2 տղա, 2 աղջիկ և 1 ֆիզկուլտուրայի ուսուցիչ):

ՀՀ վարչապետի գավաթ <<Խճուղային հեծանվավազքի>> հանրապետական փուլի թիմային առաջնությանը երկու տարիքային խմբերում ՀՀ Վայոց ձորի մարզից մասնակցում էին Աղավնաձորի և Արենիի միջնակարգ դպրոցների թիմերը:

Ընդհանուր թիմային հաշվարկով Աղավնաձորի դպրոցի թիմը /*առաջին տարիքային խումբ*/ գրավեց *8-րդ տեղը,* իսկ Արենիի թիմը՝ *5-րդ տեղը:*

5. Հայաստանի Հանրապետության վարչապետի հովանու ներքո անցկացվող «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերի համայնքային փուլ

Նոյեմբերի 5-ին Վայոց ձորի մարզում՝ Ջերմուկի կրթահամալիրում, Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության համակարգմամբ մեկնարկել է ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերի 1-ին՝ համայնքային փուլը:

Մրցաշարն անցկացվում է դպրոցականների շրջանում վոլեյբոլ մարզաձևի զարգացման, տաղանդավոր, հեռանկար ունեցող մարզիկների հայտնաբերման, դպրոցահասակ երեխաների առողջության ամրապնդման, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացման, ֆիզիկապես առողջ և բարոյապես կայուն սերնդի ձևավորման նպատակով:

Անցկացվում է 3 փուլով՝ համայնքային, մարզային և եզրափակիչ:

Վոլեյբոլի լիգան անցկացվում է 2 տարիքային խմբերի դպրոցականների միջև՝

- 6-7-րդդասարաններ
- 8-9-րդ դասարաններ

<< Դպրոցականների վոլեյբոլի լիգա>> մարզական խաղերի՝ Վայոց ձորի մարզի տարածաշրջանային փուլի արդյունքները

ՀՀ Վայոց ձորի մարզում նոյեմբերի 24-ին ավարտվել է ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող <<Վոլեյբոլի լիգա>> մարզական խաղերի տարածաշրջանային փուլը:

Ջերմուկի տարածաշրջանում 8-9-րդ դասարանների տարիքային խմբում հաղթող է ճանաչվել Ջերմուկի կրթահամալիրի թիմը, 6-7-րդ դասարանների տարիքային խմբում՝ Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցի թիմը:

Վայքի տարածաշրջանում 2 տարիքային խմբերում էլ լավագույն արդյունքներ ցուցաբերել են Վայքի հիմնական դպրոցի թիմերը:

Եղեգնաձորի տարածաշրջանում 8-9-րդ դասարանների տարիքային խմբում հաղթել է Ելփինի միջնակարգ դպրոցը, իսկ 6-7-րդ դասարանների տարիքային խմբում՝ Գետափի միջնակարգ դպրոցը:

<<Դպրոցականների վոլեյբոլի լիգա>> մարզական խաղերի մարզային փուլի արդյունքները

Նոյեմբերի 27-ին և 28-ին Վայքի մարզադպրոցում Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության համակարգմամբ տեղի ունեցան ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող <<Դպրոցականների վոլեյբոլի լիգա>> մարզական խաղերի մարզային փուլի մրցույթները:

6-7-րդ դասարանների տարիքային խմբում լավագույնը Վայքի հիմնական դպրոցի թիմն էր: 2-րդ հորիզոնականը զբաղեցրեց Գետափի միջնակարգ դպրոցի թիմը, իսկ 3-րդ հորիզոնականը՝ Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցի թիմը:

8-9-րդ դասարանների տարիքային խմբում լավագույն արդյունք ցուցաբերեց կրկին Վայքի հիմնական դպրոցի թիմը, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը գրավեցին համապատասխանաբար Ելփինի միջնակարգ դպրոցի և Ջերմուկի կրթահամալիրի թիմերը:

Մրցանակային տեղեր գրաված բոլոր դպրոցների թիմերն արժանացել են ԿԳՄՄՆ համապատասխան կարգի հավաստագրերի և գավաթների:

Տարիքային երկու խմբերում էլ առաջին հորիզոնականը գրաված Վայքի հիմնական դպրոցի թիմերը դեկտեմբերի 20-ին մասնակցեցին Երևանում անցկացվող եզրափակիչ

փուլի խաղերին, սակայն մրցանակային տեղեր չեն զբաղեցրել: Թիմերը ԿԳՄՍ նախարարության կողմից պարգևատրվել են սպորտային համազգեստով և վոլեյբոլի գնդակներով:
ՀՀ վարչապետի հովանու ներքո անցկացվող <<Դպրոցականների վոլեյբոլի լիգա>> մարզական խաղերը նպատակ ունեն զարգացնել և մասսայականացնել դպրոցականների շրջանում վոլեյբոլ մարզաձևը, հայտնաբերել տաղանդավոր մարզիկներին, ամրապնդել դպրոցահասակ երեխաների առողջությունը, ձևավորել ֆիզիկապես առողջ և կայուն սերունդ և այլն:

6.«ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշար

Լող- 26. 10. 2025թ. ***/մարզային փուլ /***
Մարզային փուլն անց է կացվել Արարատի մարզի Արարատ քաղաքում, որին մասնակցում էին 16 դպրոցականներ:
Թիմը չձևավորվեց և ՀՀ Վայոց ձորի մարզը չի մասնակցել եզրափակիչ փուլին:

7.<<ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների Սպարտակիադա>> մարզական միջոցառման մարզային փուլի արդյունքները

«Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա» մարզական միջոցառման շրջանակներում Վայոց ձորի մարզում ամփոփվեցին մարզական փուլի արդյունքները:

1. **Հրաձգության** մրցույթի մարզային փուլին /26.03.2025թ./ մասնակցում էին մարզի տարբեր դպրոցներից 21 տղա և 20 աղջիկ:

Աղջիկներից հաղթողներ ճանաչվեցին Մարինա Մկրտչյանը / Արենիի միջնակարգ դպրոց/, Գոհար Օհանյանը /Խնձորուտի միջնակարգ դպրոց/, Սոֆյա Ադամյանը /Վերնաշենի միջնակարգ դպրոց/ ,Նանե Զաքարյանը /Գետափի միջնակարգ դպրոց/:
Տղաներից հաղթողներ ճանաչվեցին Նարեկ Սիմոնյանը /Արենիի միջնակարգ դպրոց/ , Միեր Եղոյանը /Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց/ , Դավիթ Հովհաննիսյանը/Եղեգնաձորի վարժարան/ ,Վահե Մկրտչյանը /Գետափի միջնակարգ դպրոց/:
Եզրափակիչ փուլում/08.04.2025թ./ մարզի հավաքականը գրավել է 6-րդ տեղը:
Հրաձգության մրցույթի աղջիկների մրցապայքարում գերազանց հանդես եկավ Արենիի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Մարինե Մկրտչյանը, ով 50 հնարավորից վաստակեց 46 միավոր և գրավեց առաջին տեղը:

2. 5-9-րդ դասարանների աշակերտների **սեղանի թենիսի/25.03.2025թ./** մարզային փուլի անհատական մրցաշարում 16 մասնակիցներից համառ պայքարում հաղթեցին Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտներ Արշակ Ասատրյանը, Արեն Սարգսյանը, Միլենա Պետրոսյանը, Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտուհի Լենա Ավետիսյանը: Բոլոր չորս հաղթողներն ընդգրկվեցին մարզի հավաքականում և իրավունք ստացան ապրիլի 21-ին մասնակցելու Երևանում կայանալիք եզրափակիչ փուլին:

Եզրափակիչ փուլում /21.04.2025թ./մարզի հավաքականը գրավել է 8-րդ տեղը:

3. 7-12-րդ դասարանների **բազկամարտի** մարզային փուլի /27.03.2025թ./ անհատական մրցաշարին մասնակցում էին տասը քաշային կարգերում 32 մասնակիցներ՝ 14 աղջիկ և 18 տղա: Լավագույն արդյունքներ ցուցաբերեցին՝
45 կգ քաշային կարգ ՝ Սոնա Մովսիսյան / Եղեգնաձորի Հ . Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց/
55 կգ քաշային կարգ ՝ Միլենա Կարապետյան /Եղեգնաձորի վարժարան/
65 կգ քաշային կարգ ՝ Գոհար Մելքոնյան / Եղեգնաձորի Հ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց/
65+ կգ քաշային կարգ՝ Արմինե Ղազարյան /Արենիի միջնակարգ դպրոց/
55 կգ քաշային կարգ՝ Ռուբիկ Գասպարյան /Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ/
60 կգ քաշային կարգ՝ Էրիկ Սամսոնյան / Արենիի միջնակարգ դպրոց/
65 կգ քաշային կարգ՝ Խաչիկ Սաֆարյան /Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ/
70 կգ քաշային կարգ՝ Կարեն Համբարձումյան /Եղեգնաձորի վարժարան/
75 կգ քաշային կարգ՝ Դավիթ Հովհաննիսյան /Եղեգնաձորի վարժարան/
75+կգ քաշային կարգ՝ Ֆրունզ Գասպարյան / Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ/

Եզրափակիչ փուլում/ 11.04.2025թ./ մարզի հավաքականը գրավել է 7-րդ տեղը:

Բազկամարտի մրցույթում /65 կգ քաշային կարգում/ Եղեգնաձորի Հովհ. Հովհաննիսյանի անվան թիվ 2 հիմնական դպրոցի սովորող Գոհար Մելքոնյանը, հաղթելով բոլոր մրցակիցներին, հռչակվեց դպրոցականների 65 կգ քաշային կարգի չեմպիոն: Գոհար Մելքոնյանը արժանացավ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված ոսկե մեդալի և գավաթի:

4. Հնգամարտի մրցույթի մարզային փուլին /31.03.2025թ./ մասնակցում էին տարբեր դպրոցներից 22 տղաներ և 18 աղջիկներ: Համառ պայքարում հաղթողներ ճանաչվեցին՝
Աբրահամ Սարգսյանը / Գլաձորի միջնակարգ դպրոց/
Վաչե Բաղդասարյանը /Վերնաշենի միջնակարգ դպրոց/
Վոլոդյա Օհանյանը / Գողթանիկի հիմնական դպրոց/
Նարեկ Սիմոնյանը / Արենիի միջնակարգ դպրոց/
Արմեն Սիմոնյանը / Արենիի միջնակարգ դպրոց/
Լիլիա Մկրտչյանը / Արենիի միջնակարգ դպրոց/
Շաքե Մելքոնյանը / Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց/
Աննա Մովսիսյանը /Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց/
Էդիտա Նազարյանը / Գետափի միջնակարգ դպրոց/
Անի Խաչատրյանը / Ագարակաձորի միջնակարգ դպրոց/

Եզրափակիչ փուլում/29.04.2025թ./ մարզի հավաքականը գրավել է 9-րդ տեղը:

5. Շախմատի մարզային փուլին /01.04.2025թ./ մասնակցում էին մարզի դպրոցներից 10 աղջիկ և 25 տղա: Համառ պայքարում իմաստուն խաղում լավագույն արդյունքներ գրանցեցին Մարի Կյուրեխյանը / Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց/ , Լինա Սահակյանը /Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց/ , Արշակ Ասատրյանը / Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց/ , Սամսոն Հովհաննիսյանը /Քարագլխի միջնակարգ դպրոց/ և Ռաֆիկ Հովհաննիսյանը /Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց/:
Եզրափակիչ փուլում/14.04-17.04.2025/ մարզի հավաքականը գրավել է 6-րդ տեղը:

6.Ֆուտզալ /<<Սպարտակիադա>> / - 27. 09.2025թ. */ք.Եղեգնաձոր, մարզային փուլ/*

Սպարտակիադայի ծրագրով անցկացվող ֆուտզալի մրցույթի մարզային փուլին մասնակցում էին 14 թիմեր: Եզրափակչում հանդիպեցին Աղավնաձորի և Արենիի միջնակարգ դպրոցների թիմերը: Համառ պայքարում Արենիի դպրոցի թիմը 6:4 հաշվով հաղթանակ տարավ և իրավունք ստացավ մասնակցելու միջմարզային փուլին:

Ֆուտզալ - 01.10.2025թ. /ք. Եղեգնաձոր, միջմարզային փուլ/

Միջմարզային փուլին մասնակցում էին Սյունիքի, Վայոց ձորի և Արարատի մարզի հաղթող դպրոցների թիմերը:Մրցույթում հաղթող ճանաչվեց Սյունիքի մարզի թիմը: Վայոց ձորի մարզի թիմը գրավեց **2-րդ տեղը:**

7. Վոլեյբոլ / <<Սպարտակիադա>> / - 7.10-8.10.2025թ. */մարզային փուլ/*

Վոլեյբոլի մարզային փուլին մասնակցում էին 6 տղաների և 6 աղջիկների թիմերը: Հաղթողներ ճանաչվեցին Եղեգնաձորի վարժարանի տղաների և աղջիկների թիմերը:

Վոլեյբոլ - 14.10 .2025թ. /ք. *Եղեգնաձոր, միջմարզային փուլ/*
Միջմարզային փուլում հաղթողներ ճանաչվեցին Սյունիքի թիմերը:
Եղեգնաձորի վարժարանի տղաների և աղջիկների թիմերը գրավեցին 2-րդ տեղերը:

8. Բասկետբոլ /<<Սպարտակիադա>>/ -09.10.2025թ. */ք.Վայք , մարզային փուլ/*

Բասկետբոլի մարզային փուլին մասնակցում էին 8 տղաների և 6 աղջիկների թիմերը: Հաղթողներ ճանաչվեցին Արփիի Վահիկ Լևոնյանի անվան միջնակարգ դպրոցի տղաների և աղջիկների թիմերը:

Բասկետբոլ - 21.10.2025թ. */ք.Վայք, միջմարզային փուլ/*

Վայք քաղաքում կայացած բասկետբոլի միջմարզային փուլում հաղթողներ ճանաչվեցին Սյունիքի տղաների և աղջիկների թիմերը: Արփիի միջնակարգ դպրոցի տղաների և աղջիկների թիմերը միջմարզային փուլում գրավեցին 2-րդ տեղը:

8. 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև<<Սպորտլանդիա>> մարզական միջոցառման մարզային փուլի արդյունքները

Ապրիլի 18-ին անցկացվեցին ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող <<Սպորտլանդիա>> մարզական միջոցառման մարզային փուլի մրցախաղերը:

1-3-րդ դասարանների աշակերտների տարիքային խմբում առաջին պատվավոր տեղը գրավեց Արենիի միջնակարգ դպրոցի թիմը: 2-րդ և 3-րդ տեղերն զբաղեցրին համապատասխանաբար Եղեգնաձորի թիվ 2 հիմնական և Վայքի հիմնական դպրոցների թիմերը:

4-6-րդ դասարանների աշակերտների տարիքային խմբում լավագույն արդյունք ցուցաբերեց Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ և 3-րդ տեղերն զբաղեցրին համապատասխանաբար Եղեգնաձորի թիվ 1 հիմնական և Վայքի հիմնական դպրոցների թիմերը:

Մայիսի 1-3-ը Արենիի միջնակարգ դպրոցի թիմը, իսկ մայիսի 5-7-ը Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի թիմը Վանաձորում մասնակցեցին եզրափակիչ փուլի խաղերին:
Արենիի միջնակարգ դպրոցի թիմը /1-3-րդ դասարաններ/ եզրափակիչ փուլում գրավեց 5-րդ տեղը, Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի թիմը / 4-6-րդ դասարաններ/ գրավեց 9-րդ տեղը:

9. 2025 թվականին անցկացվող Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր

Ռազմամարզական խաղեր 25. 09.2025թ. */Եղեգնաձորի տարածաշրջան/*
Ռազմամարզական խաղեր 30. 09.2025թ. */Վայքի տարածաշրջան/*

Եղեգնաձորի և Վայքի տարածաշրջաններում ռազմամարզական խաղերին մասնակցել են 22 դպրոցներից 198 մասնակիցներ: Եղեգնաձորի տարածաշրջանում մասնակցել են 14 դպրոցներ, որտեղ հաղթողներ են ճանաչվել Արենիի միջնակարգ դպրոցի և Եղեգնաձորի վարժարանի թիմերը:

Վայքի տարածաշրջանում մասնակցել են 8 դպրոցներ և հաղթողներ են ճանաչվել Ջերմուկի թիվ 3 և Խնձորուտի միջնակարգ դպրոցների թիմերը:

Ռազմամարզական խաղեր - 16.10.2025թ. */ք. Եղեգնաձոր , մարզային փուլ/*
Ռազմամարզական խաղեր - 27.10 -30.10.2025թ. */ ք.Երևան, եզրափակիչ փուլ/*

ԿԳՄՍ նախարարի հրամանով 2025 թվականի <<Ռազմամարզական խաղերի>> 3-րդ և 4-րդ փուլերը չեն անցկացվել:
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի նոյեմբերի 20-ի № 2136-Ա/2 հրամանով հաստատված կանոնակարգի համաձայն՝ 2025 թվականին անցկացվող Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերը չեն իրականացվել, քանի որ ծառայություն մատուցող կազմակերպության հետ պայմանագիրը միակողմանի լուծվել է:

10.Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր Վայոց ձորի մարզում

ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ մայիսի 7-ը հայտարարվել էր Վայոց ձորի մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր: Այն նպատակ ունի նպաստել մարզի երիտասարդ բնակչության առողջության ամրապնդմանը, ֆիզիկական պատրաստականության մակարդակի, ֆիզիկապես և բարոյապես կայուն երիտասարդ սերնդի ձևավորմանը:

Միջոցառման շրջանակում մարզի կրթական հաստատություններում կազմակերպվել են տարաբնույթ մարզական միջոցառումներ և խաղեր:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի վարչության աշխատակիցներիը մի քանի դպրոցներում հետևել են մարզական միջոցառումների ընթացքին, արձանագրել, որ երեխաները մասնակցում էին մեծ ոգևորությամբ և պատրաստակամությամբ:

11.<<ՀՀ դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>>

2025 թվականի նոյեմբերի 19-20-ը Վանաձոր քաղաքում տեղի ունեցավ <<ՀՀ դպրոցականների ֆիզկուլտուրա առարկայի ստուգատես>> մրցույթի եզրափակիչ մրցույթը: Մեր մարզը ներկայացնում էին Եղեգիսի, Արենիի միջնակարգ և Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցների թիմերը: Ընդհանուր թիմային հաշվարկով թիմը գրավեց 6-րդ տեղը:

<<Եղեգնաձորի երաժշտական դպրոց>>ՊՈԱԿ-ի կատարած աշխատանքների վերաբերյալ

Եղեգնաձորի երաժշտական դպրոցում 2025 թվականին կազմակերպվել են համերգներ՝ նվիրված Բանակի օրվան, Մայրության և գեղեցկության տոնին, Հայաստանի առաջին հանրապետությանը, Երեխաների պաշտպանության օրվան:
Դպրոցն ակտիվորեն մասնակցել է մարզի մի շարք մշակութային օջախների կողմից կազմակերպված միջոցառումներին:
2025 թվականի ընթացքում Եղեգնաձորի երաժշտական դպրոցը մասնակցել է «Հայրենիքն, արվեստն ու ես» մրցույթ-ստուգատեսին, <<Սեթ-Ֆեստ>> միջմարզային, <<Արտ մյուզիք>> միջազգային, <<Փոքրիկ քայլ>> միջազգային, Armenia Prof Music Fest միջազգային մրցույթ-փառատոններին՝ արժանանալով մրցանակային տեղերի :
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ՝ (կազմակերպիչ՝ «Երևանի Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ), «ՓԱՅՏՓՈՐԻԿ» սոլֆեջոյի հանրապետական 1-ին օլիմպիադային Վայոց ձորի մարզից իրենց ակտիվ մասնակցությունն ունեցան Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սաները:
Եղեգնաձորի երաժշտական դպրոցում կայացավ տարվա ամփոփիչ բաց դաս՝ <<Երաժշտական գրականություն>> առարկայից:
Երեխաները խոսեցին մարդկային կյանքում և հասարակության մեջ երաժշտության նշանակության, գործիքների տեսակների, նրանց յուրահատուկ հնչողության և բազմազանության մասին:
Եղեգնաձորի երաժշտական դպրոցի երեխաները ուսուցողական այցի շրջանակներում այցելել են Երևան:
Կոմիտասի 155-ամյակին նվիրված միջոցառման շրջանակներում՝ երեխաները եղան Կոմիտասի անվան պանթեոնում, այնուհետև այցելեցին թանգարան – ինստիտուտ՝ ծանոթանալով թեմատիկ սրահներին, որոնք արտացոլում են Կոմիտասի կյանքի ուղին, նրա կոմպոզիտորական, երաժշտագիտական և կատարողական գործունեությունը:
Կազմակերպվել են նաև համերգներ՝ նվիրված Գիտելիքի, Ուսուցչի օրվան և Ամանորին:
<<Հայրենիքն, արվեստ ու ես>> մրցույթ-ստուգատեսի մրցութային փուլերիընթացքում անցկացվեցին վարպետաց դասեր և մասնագիտական խորհրդատվություն՝ առաջատար մասնագետների մասնակցությամբ:
Ծրագրի շրջանակներում դպրոցը հյուրընկալեց մասնագետներ Արմինե Պողոսյանին /դաշնամուր/, Աստղիկ Մկրտչյանին /ջութակ/, Տիգրան Հեքեքյանին /երգչախմբային արվեստ/ և Ծովինար Հովհաննիսյանին / քանոն/:
Դասալսումները դիտարկվում են որպես մանկավարժների վերապատրաստման կարևոր գործոն, հնարավորություն փորձի փոխանակման և մեթոդական կատարելագործման համար:
<<Հայրենիքն, արվեստ ու ես>> մրցույթ-ստուգատեսի մրցութային բոլոր փուլերը հաղթահարել և եզրափակիչ փուլում հաղթող է ճանաչվել Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սան Եվա Օհանյանը՝ արժանանալով 1-ին մրցանակի : Հաղթողին և ուսուցչին տրվել է դրամական մրցանակ, իսկ դպրոցին՝ շնորհակալագիր:
Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սաները մասնակցել են «Global Art Fest» միջազգային մրցույթ-փառատոնին և արժանացել պատվավոր մրցանակային տեղերի, իսկ ուսուցիչները և դպրոցը՝ շնորհակալագրերի:
Մրցույթներին ունեցած ակտիվ մասնակցության համար Եղեգնաձորի երաժշտական դպրոցը պարգևատրվել է շնորհակալագրերով:

«Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ում իրականացված միջոցառումներ (2025 թվական)

2025 թվականի ընթացքում «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

1. Ամանորյա հեքիաթ- մանկական ներկայացում
2. 22.03.2025թ. «Կրկեսային շոու-ներկայացում»
3. 03.04.2025թ. «Ժողովրդական երգերի համերգ»
4. 4.08.04.2025թ. «Հումորի երեկո»
5. 03.05.2025թ. համերգ-փառատոն « Մենք հայ ենք»
6. 06.05.2025թ. « Արի գնանք թատրոն՝ մանկական թատերական ներկայացում»
7. 22.05.2025թ. Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոն «Բարեկենդան» / 4 սեանս/
8. 23.05.2025թ. « Մի Սար» կամերային նվագախմբի համերգ
9. 05.06.2025թ. « Հեղինակային երգի երեկո»
10. 14.06.2025թ. «Արմենյան » երաժշտական ստուդիայի համերգ
11. 15.06.2025թ. «Համերգային շոու-ծրագիր »
12. 09.07.2025թ. «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ–ի «Ատկեն Արմենյան» երաժշտական ստուդիայի հաշվետու համերգ
13. 31. 07. 2025թ. «Մոնտֆորտ» կամերային նվագախմբի համերգ
14. 18. 09. 2025թ. «Արմատ» պարային համույթի մենահամերգ
15. 18. 09. 2025թ. «Մալյան թատրոն» «Թումանյանական հեքիաթներ» ներկայացում
16. 24. 09. 2025թ. «Արքայազն Միկին և նրա արկածները» մանկական թատրոն-ներկայացում:
17. 01. 10. 2025թ. «Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ», գեղարվեստական ղեկավար եւ դիրիժոր՝ Հովհաննես Չեքիջյան:
18. 16. 10. 2025թ. Վանաձորի «Կամերային նվագախմբի» համերգ:
19. 07. 11. 2025թ. «Մոլորվածը» գեղարվեստական ֆիլմի ցուցադրություն:
20. 27. 11. 2025թ. Սարգիս Ավետիսյանի մենահամերգ:
21. 03. 12. 2025թ. «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ –ի տնօրեն Մարո Սիմոնյանի հեղինակային երեկո:
22. 09. 12. 2025թ. Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատարների համերգ՝ նվիրված ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի 100- ամյակին:
23. 13. 12. 2025թ. «Թանկարժեք տղաները» գեղարվեստական ֆիլմի ցուցադրություն:
24. 24. 12. 2025թ. «Ամանորը Պինգվինաշենում» մանկական ներկայացում:
25. 25. 12. 2025թ. Գևորգ Մկրտչյանի մենահամերգ:
26. 30. 12. 2025թ. «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ–ի «Ամանորյա երաժշտական հեքիաթ» համերգ:

«Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի կատարած աշխատանքները, միջոցառումները և համագործակցությունները
(2025 թվական)

2025 թվականի ընթացքում «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

1. Ազգային տարազներով նկարահանումներ թանգարանում:
2. <<Սիրում եմ մա՛մ>> միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության մեկամսյակին:
3. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակում << Թանգարանների ապագան արագ փոփոխվող համայնքներում>> խորագրի ներքո << Մեկ քաղաք հազար պատմություն>> ցուցադրություն՝ նվիրված Եղեգնաձոր քաղաքին:
4. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակում << Թանգարանների ապագան արագ փոփոխվող համայնքներում>> խորագրի ներքո վարպետաց դաս << Պատրաստում ենք ուլունքազարդ >>:
5. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակում << Թանգարանների ապագան արագ փոփոխվող համայնքներում>> խորագրի ներքո << Մասնագիտական կողմնորոշում>> զրույց-քննարկում 11 մասնագետների հետ:
6. Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակում << Թանգարանների ապագան արագ փոփոխվող համայնքներում>> խորագրի ներքո ազգային պարերի ֆլեշմոբ << Պարի՛ր ինձ հետ>>:
7. «Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը «Թանգարանային ամառ» միջոցառումների շրջանակում կազմակերպել է
8. ա/ կավագործության վարպետաց դասեր
9. բ/ ուլունքագործության վարպետաց դասեգ/ պիցցայի թխման վարպետաց դասեր
10. Համագործակցություն Շատիվանք վանական համալիրում պեղումներ իրականացնող արշավախմբի հետ:
11. Համագործակցություն Եղեգիս 1 քարայրում պեղումներ իրականացնող արշավախմբի հետ:
12. Մշտական ցուցադրության համալրում ժամանակակից տեխնոլոգիաներով. «Առասպելից անդին» անիմացիոն ֆիլմեր: Միջոցառում նվիրված նոր ցուցադրությանը:
13. «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառման շրջանակներում «Վայոց ձորի ճարտարապետության գաղտնիքները» միջոցառում:
14. «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառման շրջանակներում «Նորից վեր հառնող Շատիվանք» բանախոսություն և Շատիվանքից գտնված նոր նյութերի ցուցադրություն:
15. Ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային օրվան նվիրված. «Արվեստներ և արհեստներ. ոչ նյութական ժառանգության ուղիներ» էքսպո ցուցահանդես:
16. Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվան նվիրված ցուցահանդես՝ «Ինչպիսին է հավասարությունը» խորագրով:
17. «Ամանորյա հեքիաթ» միջոցառումների շարք:

Վերոնշյալ միջոցառումներին զուգահեռ՝ թանգարանում շարունակվում են հիմնական աշխատանքները՝ առարկաների մշակում, գրանցում, վերամշակում և թվայնացում, էքսկուրսիա, գիտական նյութերի մշակումներ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
Կրթության,մշակույթի և սպորտի վարչություն